

† ՆՈՒՐԱՐ ՓԱՅՍ.

Ներկայ տարւոյ յունուար 2-ին (ն. տ.) Փարիզում ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուեցաւ Եղիպտոսի նախկին նախարարապետ հայազն Նուբար փաշան:

Հանգուցեալը ծնուել է Ջմիւռնիայում 1825 թ.: Պատանեկալիւն հասակում նրան Եւրոպա տարան: Ուր մի առ ժամանակ մնաց Փարիզում: ապա ուսանում էր Թուրուզի մօտ գրտնոդ մի գալոցում: Ուսումն աւարտելուց յետոյ, 1842 թ., Նուբարը Եղիպտոս գնաց, որտեղ իւր բեռով Պօղոս բէյի մօտ քարտուղարութեան պաշտօն էր վարում. (Պօղոս բէյ առաւորի և արտաքին գործերի նախարար էր): Երկու տարի անցած նա ստանձնեց երկրորդ թարգմանի պաշտօնը Մէհմէդ Ալի փաշայի մօտ, որի մահից յետոյ գարձաւ Իբրահիմ փաշայի առաջին քարտուղարն ու թարգմանը: Առաջին քարտուղարի և թարգմանի պաշտօնը նա պահեց նաև Աբա փաշայի ժամանակ, որի համակրութիւնը զրաւեց:

1850 թ. Նուբար Լոնդոն ուղարկուեցաւ բրիտանական նախարարութեան առաջ պաշտպանելու Եղիպտոսի իրաւունքները Թիւրքիայի դէմ: Այնուհետև նշանակուեցաւ որպէս Եղիպտոսի լիազօր նախարար Վիեննայում:

Եղիպտոսի նոր փոխարքայ Սայիդ փաշան, գնահատելով Նուբարի բարձր ընդունակութիւնները՝ յանձնարեց նրան գլուխ բերել Եղիպտոսի ձանապարհի շինութիւնը գէպի Հնդկաստան: Այդ գործը գլուխ հանեց նա կարճ ժամանակուայ ընթացքում մեծ յաջողութեամբ, երկաթուղու գիծ ձգելով Սուէզից մինչև Կահիրէ:

Այնուհետև Իսմայիլ փաշայի օրով նա Կ. Պոլիս գնաց Սուէզի ջրանցքի բացման համար խորհրդակցելու. այնտեղ ստացաւ փաշայութեան ատիճանը: Ապա Փարիզ գնաց փոխարքայի և ջրանցքի ընկերութեան մէջ ծագած մի քանի տարաձայնութիւններին վերջ տալու: Այս գործն ևս յաջողութեամբ գլուխ բերեց:

1866 թ. արտախորհրդ յանձնարարութեամբ Կ. Պոլիս գնաց նա Եղիպտոսի ինքնավարութեան վերաբերեալ մի քանի նոր իրաւունքներ ձեռք բերելու համար: Այնուհետև նախարարութեան գլուխ է եղել պարբերաբար 1876—79, 1884—88 և 1894—95 թ.: Այսպիսով մեծոց ունեցաւ իւր վարչական և դիւանագիտական բարձր կարողութիւնները ցոյց տալու և, մեծամեծ ծառայութիւններ մատուցանելով Եղիպտոսին՝ մեծ հռչակ ստանալու քաղաքական աշխարհում:

Բերլինի վեհաժողովին Նուբար փաշան մի ծրագիր ուղարկեց Հայաստանում մտցնելիք բարենորոգութիւնների վերաբերեալ, որի համաձայն մի ընդհանուր քրիստոնեայ կառավարել պէտք էր նշանակել 7 տ. ժամանակով:

Իբրև քաղաքագէտ նա կարող էր մրցել Եւրոպայի տմենանշանաւոր քաղաքագէտների հետ և լաւ ծանօթ էր բոլոր տէրութիւնների ներքին կեանքին: Իբրև հայ մարդ շատ գէպբերում օգնութեան ձեռք է կառկառել և բարեկամացել իւր աղգակիցներին. ի միջի այլոց նորա հարուստ օժանդակութեամբ է բացուել Նուբար—Հահնապարեան վարժարանը, որ տարաբաղդաբար 10 տ. միայն տևեց (մինչև 1876 թ.): բաց խիստ արդիւնաւէտ եղաւ:

Նուբար փաշայի մարմինը Եղիպտոս տալուց և թաղուեցաւ մեծ հանդիսով:—Նորա Պօղոս որդին բարձր դիրք և փաշայի աստիճան ունի:

Ա Ջ Դ

Յաջորդ մարա ամսից սկսած՝ Փարիզում պէտք է հրատարակուի Բանասէր անուն մի հանդէս, խմբագրութեամբ Կարապետ Բասմաճեանի: Թերթը եռամսեայ է և առ այժմ՝ վիմագիր. տարեկան չորս թուեր կը կազմեն մի ստուար հատոր: Թերթի պարունակութիւնը պիտի կազմեն զուտ հայագիտական, այսինքն հայոց լիզուարանութեան, հնախօսութեան, բանասիրութեան և պատմութեան մասին յօդուածներ, Փարիզի bibliothèque nationale-ի հայ ձեռագրաց մասին տեղեկութիւններ և ինքն թերթը ամենևին ունենալու չէ գրական, ընդհանուր գիտական, քաղաքական և ինքն բաժիններ:

Բաժանորդագիրն՝ թղթատարի ծախքը միասին հաշուած՝ տարեկան 10 Ֆրանկ=4 ռուբլի. խմբագրութեան հասցէն է

K. Basmadjian

112 boulevard Rochechouart. Paris.